ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՐԳՍՅԱՆ ԳՈՌ ԳԵՂԱՄԻ

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՉԻՆ-ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (1991–2010 թթ.)

Է.00.02-«Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ
պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի
հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2012

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում

Գիտական ղեկավար՝ քաղաքական գիտությունների դոկտոր
Շիրինյան Լ. Ղ.

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր
Չոբանյան Պ. Ա.

պատմական գիտությունների թեկնածու
Սողոմոնյան Մ. Ա.

Առաջատար կազմակերպություն Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2012 թ. մայիսի 31-ին, ժ. 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտում գործող ՀՀ ԲՈՀ-ի 006 «Համաշխարհային պատմություն» մասնագիտական խորհրդում (հասցե՝ 0019, ք. Երևան, Մ. Բաղրամյան 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2012 թ. ապրիլի 28-ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու Ղազարյան Ռ. Պ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Թեմայի ուսումնասիրման կարևորությունը պայմանավորված է Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների հետազոտմամբ, որը դասվում է «փափուկ ուժի» հայեցակարգին, «Պատեր և ճանապարհներ» աշխարհաքաղաքական բաղադրիչներին, այս բաղադրիչներից բխող «Դուրս շարժվելու» մարտավարությանը: Չինաստանի ժամանակակից արտաքին քաղաքականության հիմքում ընկած են Կոնֆուցիական «մեծ ընտանիքի», «ներդաշնակության», «համագործակցության» և «խաղաղ գոյակցման» սկզբունքները:

Հենց այս առանձնահատկությունների (փիլիսոփայական տեսությունների ու սկզբունքների) շնորհիվ է, որ Չինաստանն այսօր իր ուրույն տեղն է զբաղեցնում միջազգային հարաբերություններում:

Ատենախոսության արդիականությունն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ աշխատանքում քննարկվում և համակողմանի արժեքավորվում է չին-հայկական հարաբերությունների հիմնահարցերի մի խումբ, որը դեռևս իր ամփոփ տեղը չի գտել համապատասխան գրականության էջերում:

1980–90-ական թթ. նկատելի դարձավ Չինաստանի զարգացող դերը: 1970–1980-ական թթ. Չինաստանի նախկին առաջնորդ Դեն Սիաոպինի բարեփոխումներից հետո ստեղծվեց նոր իրադրություն: Դրա հետևանքով անճանաչելիորեն վերափոխվեց ՉԺՀ տնտեսությունը և փոխվեց նրա դերը նոր աշխարհակարգում: Նոր աշխարհաքաղաքական կառուցվածքի պայմաններում Չինաստանն ակտիվ քաղաքական դիրք գրավեց շնորհիվ իր «ճկուն» դիվանագիտության:

Նրա հզոր դերը և տարաբնույթ հետաքրքրությունները ներկայացված են աշխարհի բոլոր մայրցամաքներում և տարածաշրջաններում: Անդրերկնայինի նման «ճկուն» դիվանագիտական գործունեության շրջանակներից դուրս չի մնում Հարավային Կովկասը՝ հատկապես Հայաստանը: Այս երկու պետություններին միավորում է նաև պանթյուրքիզմի գաղափարախոսության վտանգը: «Մեծ Թուրանի» վերաբերյալ թյուրքական աշխարհի երազանքները դարեր շարունակ լարվածության մեջ են պահում թե՛ Հայաստանին, թե՛ Չինաստանին, ինչպես նաև շատ այլ պետությունների: Այս խնդրի շուրջ ռազմավարական համագործակցությունը Հայաստանի և Չինաստանի միջև ուղղակի անխուսափելի է:

Հայաստանի Հանրապետության նորագույն շրջանի պատմության մեջ կարևորվում է հայ նորանկախ պետականության դիվանագիտական հարաբերությունների պատմության ուսումնասիրությունը, որն օգնում է թե հետազոտողներին և թե մասնագետներին առավել ճշգրտորեն կողմնորոշվել պատմական տարբեր իրադարձություններում, քննական վերլուծության արդյունքում ներկայացնել բնագավառում ձեռք բերված դրական արդյունքները, ինչպես նաև հետագա անելիքները:

Անկախացումից հետո Հայաստանի Հանրապետությունում կարևորվել են Չինաստանի հետ ունեցած հարաբերությունները, քանզի Չինաստանը հայ պետական գործիչների կողմից իրավացիորեն ընկալվել և գնահատվել է որպես երկիր-պետություն, որն զգալի և կարևոր դերակատարում ունի ոչ միայն Ասիական տարածաշրջանում, այլև ամբողջ աշխարհում:

Ժամանակակից աշխարհում ՉԺՀ-ն առանց կասկածների, կանգնած է այն երկրների շարքում, որոնք հետաքրքրություն են ներկայացնում օտարազգի քաղաքական գործիչների, գիտնականների, վերլուծաբանների մոտ: Բոլորին զարմացնում է Չինաստանի տնտեսական աճը, որը դեռևս 1970-ականներին համարվում էր հետամնաց երկիր: Ներկայումս ՉԺՀ-ն արագ զարգացող պետություն է՝ ՀՆԱ (համախառն ներքին արդյունք) աճող ցուցանիշներով: 2005 թ. Չինաստանն հանդիսանում էր աշխարհի երրորդ տնտեսությունն ունեցող երկիրը՝ ԱՄՆ-ից, Գերմանիայից և Ճապոնիայից հետո: 2011 թ. այն երկրորդն է՝ ԱՄՆ-ից հետո:

ՉԺՀ-ն նաև տպավորիչ արդյունքների է հասել միջազգային հարաբերությունների ասպարեզում: Այդ պետությունը հանդիսանում է ՄԱԿ-ի Անվտանգության Խորհրդի մշտական անդամ և գլոբալ հարցերի կարգավորմանն ուղղված միջազգային կարևորագույն նախաձեռնությունների ակտիվ մասնակից: ՉԺՀ-ն ակտիվ միջամտություն է ցուցաբերում.

- զանգվածային ոչնչացման զենքի տարածման դեմ պայքարում,
- միջազգային ահաբեկչության դեմ պայքարում,
- բնապահպանական աղետների սպառնալիքների կանխատեսման և կանխարգելման ծրագրերում և այլն:

Նման նախաձեռնություններում Չինաստանի դերը կարելի է բացատրել նրանով, որ այն կարևոր դերակատար է Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում, որտեղ ապրում է աշխարհի բնակչության մեծ մասը: Այստեղ են տեղակայված գերտերություններից մի քանիսը, որոնք զինված են զանգվածային ոչնչացման զենքով և որտեղ զգացվում է ամենադինամիկ զարգացումը: Հավանաբար, հենց դրա շնորհիվ Չինաստանն այսօր դարձել է համաշխարհային մրցակցության կենտրոն: Այս ասիական հսկան հանդիսանում է Շանհայան Համագործակցության Կազմակերպության (ՇՀԿ) հիմնադիրներից մեկը: Մի շարք տեսաբանների կարծիքով, այս կազմակերպության հիմնադրման նպատակներից մեկը հենց ահաբեկչության և անջատողականության դեմ պայքարն է:

Նման մեծ թափով առաջ շարժվող Չինաստանի արտաքին քաղաքականության մեջ որոշակի տեղ է զբաղեցնում Հայաստանի Հանրապետությունը: 2008 թ. Պեկինում ՀՀ նախագահ Ս. Սարգսյանի հնչեցրած խոսքերից կարելի է հետևություն անել, որ Հայաստանի արտաքին քաղաքականության մեջ մեծ կարևորություն է տրվում անդրերկնայինի հետ հարաբերություններին: Երկու երկրների միջև կապերի պատմությունը դարավոր և վաղնջենական են: Առանց չին-հայկական հարաբերությունների զարգացման ուսումնասիրման անհնարին է պատկերացում կազմել փոխհարաբերությունների հեռանկարների մասին: Նշվել է, որ Հայաստանը Չինաստանի հետ կապում են ոչ միայն

տնտեսական և մշակութային հետաքրքրությունները, այլև ռազմավարական համագործակցության լայն հնարավորությունները:

Հետազոտության խնդիրները և նպատակները: Տվյալ ատենախոսությունը լուսաբանում է Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները, Չինաստանի ներկա աշխարհաքաղաքականությունը, տարածաշրջանային ներգրավվածությունը, հարաբերությունները գերտերությունների, Հարավկովկասյան երկրների հետ, ինչպես նաև չին-հայկական փոխհարաբերությունների զարգացումը: Հետազոտության թեման ընտրելուց հաշվի է առնվել Չինաստանի դերը նոր աշխարհակարգում, նրա բազմակողմ հարաբերությունները գերտերությունների հետ, ՉԺՀ արտաքին քաղաքական հետաքրքրությունների առկայության փաստերը Հր. Կովկասում և Հայաստանում և այլ հանգամանքներ: Այդ նպատակին հասնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրների պարզաբանումը:

- Ուսումնասիրել Չինաստանի արտաքին քաղաքականության փիլիսոփայական, մշակութային առանձնահատկությունները:
- Ուսումնասիրել Չինաստանի դերը ներկա աշխարհաքաղաքական համակարգում և ներկայացնել նրա աշխարհաքաղաքականության գերակա ուղղություններն արդի ժամանակաշրջանում:
- Տալ ՉԺՀ տնտեսական, սոցիալական ու քաղաքական դերի զարգացման պատճառները:
- Հետազոտել Չինաստանի հարաբերությունները հարևան, ինչպես նաև տարբեր տարածաշրջանային պետությունների հետ՝ լուսաբանելով տարածաշրջանային քաղաքականության արդյունավետ զարգացումը:

Նշված խնդիրների պարզաբանումն ու վեր հանումը հնարավորություն են ընձեռում ամբողջական պատկերացում կազմելու Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների մասին՝ առանձնապես Հարավային Կովկասում և Հայաստանում և այդ առումով հեղինակն իր առջև դրված առավել կարևոր խնդիրներն է համարում.

- Ներկայացնել Հայաստանի դերը Չինաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների համակարգում:
- Ուսումնասիրել Հր. Կովկասի և Հայաստանին հարակից երկրների հետ Չինաստանի հարաբերություններն ու կապերը:
- Անդրադառնալ չին-հայկական հարաբերությունների պատմությանը և վերլուծմանը:
- Հետազոտել չին-հայկական հարաբերությունների զարգացումը ՀՀ անկախացումից ի վեր՝ դիվանագիտական հարաբերությունների ձևավորման առանցքում:
- Վեր հանել Չինաստանի և Հայաստանի հարաբերություններում առկա ռազմավարական խնդիրները:

Աշխատության գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորությունը կայանում է նրանում, որ այն չին-հայկական

հարաբերությունների առաջին բազմակողմանի ուսումնասիրությունն է: Դեռևս չկա ծավալուն, համակարգող գիտական աշխատանք, որը կուսումնասիրեր չին-հայկական հարաբերությունները Չինաստանի աշխարհաքաղաքական հետաքրքրությունների համատեքստում:

Ատենախոսության նորությունը Հր. Կովկասում Չինաստանի ունեցած դերի նկարագրությունն է և չին-հայկական հարաբերությունների ռազմավարական տեսանկյունների ուսումնասիրությունն ու լուսաբանումը:

Օգտագործված սկզբնաղբյուրների և գրականության համառոտ տեսություն: ՉԺՀ աշխարհաքաղաքական արդի խնդիրներն հիմնականում քննարկվել են օտար հեղինակների կողմից: Գնահատելով հանդերձ նրանց աշխատությունների բազմարժեք կողմերը՝ պետք է միաժամանակ նշել, որ դրանք չեն ընդգրկում Չինաստանի ներկա աշխարհաքաղաքականության բոլոր տեսանկյունները և փուլերը, և ամբողջական պատկերացում չեն տալիս աշխարհաքաղաքական զարգացումների մասին:

Ատենախոսությունը գրվել է հայերեն, անգլերեն, ռուսերեն և չինարեն լեզուներով տարաբնույթ աղբյուրների և ուսումնասիրությունների հետազոտման հիման վրա: Ուսումնասիրությանը զգալիորեն նպաստել են հայ և օտարազգի հետազոտողների քննարկվող թեմային առնչվող աշխատությունները, հոդվածները, ինչպես նաև պաշտոնական հրապարակումները, քաղաքական գործիչների հուշերն ու հայտարարությունները:

Ատենախոսության մշակման համար օգտագործվել են հայ, չինացի, ռուս և այլ օտարազգի քաղաքական գործիչների տարբեր հարցերի վերաբերյալ հրատարակված փաստաթղթերն ու վավերագրերը[1]:

Չինաստանի արտաքին քաղաքականության հիմքում ընկած փիլիսափայության լուսաբանման գործում հատկանշական են Լիու Բինծիեյի «Չինաստանի փիլիսոփայությունը 21-րդ դարի արտաքին հարաբերություններում» աշխատությունը[2], ինչպես նաև Մեհեր Մակարթուրի «Կոնֆուցիոս» աշխատությունը[3]:

Չինաստանի միջազգային հարաբերությունների դերին նվիրված աշխատանքներից կարելի է առանձնացնել քաղաքագետ Վ. Դերգաչովի

---

[1] Position Paper of the People's Republic of China at the 65th Session of the UN General Assambly. Yazi ,N 66, 2010. 人民共和国的中国信息的图书。联合与中国人民共和国和亚美尼亚共和国联合公报。北京(2002–2006), 2006. ՉԺՀ-ի ԱԳՆ տեղեկագիրք, Չինաստանի ժողովրդական Հանրապետության և Հայաստանի Հանրապետության միջև Համատեղ հռչակագիր (2002–2006), Պեկին, 2006: ՀՀ-ում ՉԺՀ դեսպանության կից առևտրատնտեսական հարցերով գրասենյակի տեղեկատու: Китайско-Армянские отнащения, Посольства КНР в Армении, 25.11.2005. http://am.china-embassy.org/rus/zygx/t392051.htm. White Papers of the Government of China. http://www.china.org.cn/e-white/index.htm.

[2] Binjie L., China's Philosophy on Foreign Affairs in the 21st Century, Foreign Language Press, Beijing, 2006.

[3] Mc Arthur M., Confucius, Querqus, London, 2010.

աշխատությունը[4], ուր հեղինակն անդրադարձել է չինական աշխարհաքաղաքականության պատմությանը: Համաձայն Դերգաչովի ուսումնասիրության, այն լինելով ավելի հին ուսումնասիրման առարկա, քան Արևմտյան աշխարհաքաղաքականությունը, դեռևս մնում է ստվերում: ՉԺՀ նոր աշխարհաքաղաքականությունը լուսաբանել են քաղաքական տեսաբաններ Ֆ. Զաքարիան, Վ. Հատտոնը և Դ. Բաբայանը[5]: Դասական աշխարհաքաղաքականության ուսումնասիրման գործում օգտագործվել են դասական այնպիսի աշխատություններ, ինչպիսիք են Հ. Քիսինջերի և Զ. Բժեզինսկու[6] աշխատանքները:

Աշխարհաքաղաքական տարբեր ասպեկտների վերաբերյալ գիտական աշխատանքներ են հրատարակել չին և օտարազգի գիտնականներ և քաղաքագետներ: Դրանցից կարելի է առանձնացնել Դ. Բինգուային, Թ. Ֆինգարին. Վ. Լամին[7] և այլոց:

Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության և գերտերությունների հետ հարաբերությունների պատկերավոր նկարագիր է տվել չին միջազգայնագետ Ս. Կուանգայն իր «Միջազգային իրավիճակը և անվտանգության ռազմավարությունը» գրքում[8], որտեղ պատշաճ կերպով նկարագրում է Չինաստանի քաղաքական ներկայությունն աշխարհի տարբեր տարածաշրջաններում և հարաբերությունները հարևան երկրների հետ: Նոր աշխարհակարգի ձևավորման ճանապարհին ՉԺՀ-ն մեծ ուշադրություն է դարձնում հարևան այն պետությունների հետ կապերին, որոնք հիմնականում պատկանում են «ոչ վագր»[9] պետությունների շարքին:

Հարևան պետությունների հետ հարաբերություններում Չինաստանը վարում է «ճկուն» դիվանագիտություն՝ փորձելով շահել ավելի փոքր և թույլ զարգացած հարևանների վստահությունը: Հարաբերությունների զարգացման նման ընթացքն ամերիկացի գիտնական Բ. Էմոթն[10] անվանում

---

[4] Дергачев В., Особенности китайской геополитики, Вестник аналитик, N 2, Москва, 2008.

[5] Zakaria F., The Post-American World and The Rise of the Rest. Great Britain Penguin Books, 2009. Hutton. W., China and The West in the 21st Century, British Library, London, 2009, Бабаян Д., Геополитика Китая на современном этапе, Нораванк, Де-Факто, Ереван 2010.

[6] Киссинджер Г., Дипломатия, Ладомир, Москва, 1994. Бжезинский З., Великая шахматная доска. http://lib.ru/POLITOLOGA/AMERICA/bzhezinskij.bd.

[7] Bingguo D., "China-US Ties at New Historical Starting Point", China Daily, 30.12.2008. Fingar T., Frustration and Hopes. An American Perspective in United States China relations, Journal of Contemporary China., Volume 10. 2001. Lam W., Beijing Seeks a Shift in Geopolitics, Greater China, 14.10.2010, http://www.atimes.com/atimes/China.html.

[8] Guangkai X., International Situation and A Security Strategy, China Institute for International Strategic Studies, Beijing, 2009.

[9] «**Ասիական վագր**» պետությունները տնտեսապես առաջատար և հարուստ երկրներն են՝ Չինաստան, Ճապոնիա, Հնդկաստան, Սինգապուր: Այս չորս պետություններին նաև անվանում են **«Ասիական չորս վիշապներ»**: Վերոնշյալ «**ոչ վագր»** պետությունների շարքում են դասվում համեմատաբար ավելի թույլ զարգացած ասիական պետությունները:

[10] Emott B., Rivals-How The Power Struggle Between China, India And Japan Will Shape Our Next Decade, Mariner Press, NY, 2009.

է «Ասիական Դրամա», որտեղ Չինաստանը, Ճապոնիան և Հնդկաստանը հանդիսանալով ասիական տարածաշրջանի գերտերություններ՝ ստեղծում են նոր մայրցամաք՝ միավորելով հարավ, հյուսիս, հարավարևելասասիական պետությունները մեկ ընդհանուր օղակի մեջ՝ դուրս մղելով օտար ուժերը (ԱՄՆ, Եվրամիություն):

Պետք է բարձր գնահատականի արժանացնել Ջ. Բրեսնանի աշխատությունը[11], որտեղ նա հետազոտել է Հարավարևելյան Ասիայում Չինաստանի դերի բարձրացումը: Հեղինակը վերլուծել է ԱՄՆ-ի գերիշխող դերի անկումը Հարավարևելյան Ասիայում և տարածաշրջանում Չինաստան-Հնդկաստան-Ճապոնիա եռյակի կողմից առաջատարի դերի ստանձնումը:

ՉԺՀ տարածաշրջանային քաղաքականությանը նվիրված մի շարք հոդվածներ և աշխատություններ են լույս ընծայվել հայ և այլազգի հեղինակների կողմից: Ատենախոսության Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության հատվածի ուսումնասիրման գործում օգտագործվել են Ս. Լյուզանինի, Ջ. Միքսի, Մ. Դումհաուի, Ռ. Ցոնձըի, Օ. Զոտովի և Ս. Հարությունյանի հոդվածները[12]: Վերոնշյալ հեղինակներն իրենց հոդվածներում լուսաբանում են ՉԺՀ «ճկուն» դիվանագիտության արդյունքները ձևավորված տարածաշրջաններում:

Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության մեջ մեծ տեղ են զբաղեցնում հետաքրքրությունների շրջանակը Հր. Կովկասում, Հայաստանում, ինչպես նաև նրա հարևան պետությունների հետ հարաբերությունները: Այս հետաքրքրություններն ու կապերը հիմնականում լուսաբանվել են Ա. Յուրգելեվիցիուսի, Ս. Սարյանի, Կ. Լարսոնի, Վ. Ցան Կեմանդեի, Ջ. Կալաբերսի, Ջ. Ֆիշմանի, Ֆազալ-Ուր-Ռահմանի և Դ. Բաբայանի հոդվածներում[13]:

---

[11] Bresman J., From Dominoes to Dynamos-The Tramsformation of Souteasth Asia, Councilon Foreign Relations Book, United States, 1997.

[12] Лузянин С., Китай и мир, New Eastern Outlook, 03.03.2010, http://www.journal neo.com/?q=node/191. Miks J., China's Pyrrhic Victory?. The Diplomat Blogs, 24.01.2010. http://the-diplomat.com/china-power/2010/09/24/china%E2%80%99s-pyrrhic-victory/. Dumbaugh K., China's Growing Interest in Latin America, CRS Report for Congress,20.04.2007. Zongze R., China's Role In a Northeast Community, Asian Perspective ,N 30, 2006. Зотов. О., Большая Центральная Азия и принципы геополитики КНР, Транскаспийский проект, 25.07.2000. Հարությունյան Ս., Չինական ներթափանցումը Կենտրոնական Ասիա, Նորավանք, N 3, 26.07.2006: Bresnan J., From Dominoeas to Dynamos. The Transformation of Southeast Asia. Council of Foreign Relations Press, N Y, 1997.

[13] Jurgelevicius A., Friendship of Interests: Turkey and China, Center for Strategic Studies, 20.05.2010. www.bilgesam.org. Սարյան Ա., Չինաստանը և Թուրքիան. Եվրասիայում դիրքերի ճշգրտման ընթացք, Նորավանք, 18.05.2010: Larson C., How China Wins and Loses Xinjiang, Foreign Policy Magazine. 09.07.2009 . Willem van Kemmenade, Iran's Relations with China and the West. Clingendael, Nitherlands ,N 24.07.11.2009. Friedman G., The Russo-Georgian War and the Balance of Power, 12.08.2008, http://www.stratfor.com/weekly/russo. Fazal-ur-Rahman., China's response to Russia-Georgia Conflict, Reflections ,N 1, 06.06.2009. Бабаян Д. Роль и место Южного

Չին-հայկական հարաբերություններին նվիրված աշխատությունները շատ քիչ են, որոնց ուսումնասիրմամբ դժվար է ամբողջական պատկերացում կազմել երկու պետությունների հարաբերությունների մասին: Հայ-չինական պատմական կապերն իր աշխատանքում ներկայացրել է Ռ. Պետրոսյանը[14]:

Չինաստանում հայկական գաղութների վերաբերյալ մանրամասն տեղեկատվություն է պարունակում «Հայ Գաղթաշխարհի Պատմություն»[15] կոլեկտիվ աշխատությունը: Պատմական տվյալներ է պարունակում ՀՀ-ում ՉԺՀ դեսպանության կողմից հրատարակված «Համառոտ Չինաստանի մասին» գիրքը[16]: Այս գիրքը պարունակում է նաև ՀՀ-ՉԺՀ դիվանագիտական և պաշտոնական հարաբերությունների ժամանակագրություն: Ժամանակակից քաղաքական հարաբերությունները լուսաբանվում են Ն. Չալըմյանի հոդվածում[17]: Հայ-չինական հարաբերությունների ռազմավարական հեռանկարների վերլուծությունները տրված են Հ. Հովհաննիսյանի, Ս. Գլադնեի, Բ. Աբիդդելի և Դ. Բաբայանի հոդվածներում[18]: Ռազմավարական հետաքրքրությունների լուսաբանման գործում մեծ կարևորություն է ներկայացնում Լ. Շիրինյանի «Նոր Աշխարհակարգը և Հայաստանը» աշխատությունը[19]: Ատենախոսության ռազմավարական հետաքրքրություններին նվիրված հատվածում ուսումնասիրվել է պարբերական մամուլ՝ «Հայաստանի Հանրապետություն», «Peoples Daily», «China Daily»[20], որոնք ներկայացնում են պաշտոնական տեսակետը:

Ատենախոսության մշակման ընթացքում օգտագործվել են բազմաթիվ տնտեսական, քաղաքական, պատմամշակութային, տեղեկատվական

Кавказа в геополтической повестке Китайской Народной Республики, 21-й век, N 2 (18), 2011 г, стр. 66–97.

[14] Bedrosian R., China and the Chinese According to 5-13th Century Classical Armenian Sources, Armenian Review Vol. 34, 1981,pp. 17-24.

[15] Հայ գաղթաշխարհի պատմություն 2 (միջնադարից մինչև 1920 թ.), խմբագիր Վ. Միքայելյան, հ. 2., «Գիտություն» հրատ., 2003:

[16] Հայաստանի Հանրապետությունում Չինաստանի Ժողովրդական Հանրապետության դեսպանություն, Համառոտ Չինաստանի մասին,Երևան, 2009:

[17] Չալըմյան Ն., Հայ-չինական հարաբերությունները 1992–2007 թթ., Երևանի Համալսարանի Բանբեր ,N 130. 6, 2010:

[18] Հովհաննիսյան Հ., Ույղուրները և Մենք, Նորավանք, 2009.www.noravanq.am: **Gladney C.,** China's Uyghur Problem and the Shanghai Cooperation Organization., Uyghur American Association, 08.16.2006. Adibelli B., Can the Uygurs Serve as a Bridge in the Future of Turkey-China Relations, Eurasia Critic, 08.2009. http://www.eurasiacritic.com/articles/can-uygurs-serve-bridge- future-turkey-china-relations.

[19] Շիրինյան Լ., Նոր աշխարհակարգը և Հայաստանը, ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիա, Սարվարդ հրատ, Երևան, 2008:

[20] Հայ-չինական հարաբերությունները անցյալի և ներկայի բարձունքից, Անցու, N 11, Հայաստանի Հանրապետություն, 11.04.2007:China Demands Turkish Retraction, China Daily, 07.15.2009. http://bbs.chinadaily.com.cn/viewthread.php?tid=6416. Public Angered by Turkish PM's "genocide" accusation, Peoples Daily Online, 14.07.2009, http://english.peopledaily.com.cn/90001/90776/90882/6699942.html.

կայքեր: Օգտագործվել է ցանցում տեղակայված գրադարաններում ներկայացված հոդվածներն ու աշխատությունները: Հեղինակը մեծապես օգտվել է «Jamestown Foundation»[21] ցանցային քաղաքական կայքից և «Jstor»[22] գրադարանից:

Հետազոտության ժամանակագրական շրջանակները: Ատենախոսությունն ընդգրկում է 1991 թ. մինչև 2010 թ. Չինաստանի ժամանակակից արտաքին քաղաքականության, ինչպես նաև աշխարհաքաղաքական իրադրության մանրամասները: Միաժամանակ զգալի տեղ է հատկացված Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկություններին և նրա ժամանակակից տարածաշրջանային քաղաքականությանը: Ատենախոսությունն ընդգրկում է 1991–2010 թթ. ժամանակահատվածում չին-հայկական հարաբերություններում առկա զարգացումները:

Ատենախոսության մեթոդաբանական հիմքը: Աշխատության մեթոդաբանական հիմքում ընկած են Չինաստանի միջազգային դերակատարման և ՀՀ հետ հարաբերությունների, դրանց ընթացքի և այն պայմանավորող գործոնների հետ կապված տարբեր հարցադրումների, տեսակետների և աղբյուրագիտական նյութի քննական վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրման ուսումնասիրությունը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Ատենախոսության դրույթներն օգտակար են քաղաքագիտական հետազոտությունների, պետական մարմիններին վերլուծական նյութեր տրամադրելու համար: Դրանք կարող են օգտակար լինել ՀՀ արտաքին քաղաքական կուրսը մշակելիս, ինչպես նաև համաշխարհային պատմության առարկայի դասավանդման նոր կուրս մշակելիս: Ատենախոսության թեման կարող է դիտարկվել որպես օգտակար նյութ՝ ինչպես համաշխարհային պատմություն, այնպես էլ միջազգային հարաբերություններ առարկայի համար:

Ատենախոսության մեջ առաջադրված մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել այնպիսի ուսումնասիրությունների և դասախոսությունների համար, որոնք նվիրված են ինչպես Չինաստանի արտաքին քաղաքականությանը, այնպես էլ հայ-չինական հարաբերություններին, դրանց հետագա զարգացմանը, ռազմավարական հետաքրքրությունների և հնարավոր զարգացումների լուսաբանմանը:

Աշխատանքի փորձաքննությունը և պաշտոնական հավանությունը: Ատենախոսությունը հաստատվել է ՀՊՄՀ-ի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում:

---

[21] http://www.jamestown.org/.

[22] http://www.jstor.org.

Աշխատության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից և օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածություն: Այստեղ տրվում է նկարագիր թեմայի արդիականության, գիտական նորամուծության, գրականության տեսության և ուսումնասիրության հիմնական նպատակների վերաբերյալ:

Գլուխ առաջին: «Չինաստանի աշխարհաքաղաքականության առանձահատկությունները»: Այստեղ նկարագրվում և վերլուծվում են Չինաստանի աշխարհաքաղաքականության գերակայությունները և տարածաշրջանային քաղաքականության գլխավոր ուղղությունները:

Առաջին գլխի առաջին ենթավերնագիր: «Չինաստանի աշխարհաքաղաքականության գերակայությունները»: Վերլուծվում են Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունները, դրանց ավանդական և փիլիսոփայական հենքը: Տրվում է ընդհանուր գնահատական աշխարհում Չինաստանի դերի արդիականացման վերաբերյալ: Ուսումնասիրվում է, թե ինչպես Չինաստանը բավականին արագ տեմպերով հայտնվեց աշխարհաքաղաքական համակարգի կենտրոնում: Համաձայն Ա. Հանտերի՝ Չինաստանն առաջիններից մեկն էր, որ օգտագործեց «փափուկ» իշխանությունը[23]: Չինաստանը ստեղծել է Մեծ քաղաքակրթական աշխարհաքաղաքականություն՝ հիմնված մեծ չինական փիլիսոփայության վրա: Անդրերկնայինը, շատ դարերի ընթացքում ձգտում է պետության և քաղաքակրթության միասնական սահմանների պահպանությանը, արտաքին աշխարհի հանդեպ ստեղծագործական ազատության և արտաքին միջամտությունից չինական ավանդույթների և մտածողության պահպանման համադրության միջոցով: Այդ աշխարհաքաղաքականության խորհրդանիշները և խոշոր նյութական հուշարձանները միջազգային հարաբերություններում հանդիսացան Մետաքսի ճանապարհը և Չինական մեծ պատը:

Չինաստանն ընդունված է համարել պետություն ձևացող քաղաքակրթություն: Հզոր «պետություն-քաղաքակրթության» վերածնունդը տեղի է ունենում համաշխարհային ձեռքբերումների և տեղական մշակութային-պատմական ավանդույթների, հարուստ փիլիսոփայական ժառանգության համադրության հիման վրա: Մինչև 18-րդ դարի ավարտը Չինաստանն աշխարհի ամենահզոր կայսրություններից էր, որն առաջատար էր առևտրում, արդյունաբերական նորամուծությունում, գյուղատնտեսական

[23] Hunter A., Soft Power and Cultural Influence,The Washington Post, N 2, 2005, pp. 373-398. http://cjip.oxfordjournals.org/content/2/3/373.full.

աշխատուժի արտադրողականությամբ և կենսամակարդակով: Այսօր Չինաստանը կրկին վերադառնում է համաշխարհային առաջատարների շարքը: 2009–2010 թթ. ընթացքում Չինաստանի ՀՆԱ-ն ավելացել է 65,5%-ով և կազմել է մոտավորապես 3,4մլդ. ԱՄՆ դոլար՝ 10,6% տարեկան աճով: Դա հնարավորություն տվեց Չինաստանին դառնալու աշխարհի երկրորդ տնտեսությունը՝ ԱՄՆ-ից հետո: Արդյունքում՝ Չինաստանի բաժինը համաշխարհային տնտեսությունում երեսուն տարիների ընթացքում 1%–ից ավելացավ մինչև 8%: Չինաստանն համարվում է աշխարհում հզոր արտահանող և արտարժութային պահուստներ տնօրինող (1 տրլն. 520 մլդ ԱՄՆ դոլար) և ԱՄՆ արտասահմանյան վարկատուների ծավալով գրավում է երկրորդ տեղը՝ պահպանելով հարյուր միլիարդավոր ֆինանսական ակտիվները: Վերջին մի քանի տասնամյակների ընթացքում արտահանման ծավալները կազմել են տարեկան 16,7%, և արտահանման ծավալներով Չինաստանը գրավում է աշխարհում երրորդ տեղը[24]: Չինական արտահանումն ունի հզոր աշխարհաքաղաքական նշանակություն և ստեղծում է մրցակցություն՝ արևմտյան հարուստ երկրների համար:

Ինչպես կանխատեսում է ամերիկացի քաղաքագետ Զ. Բժեզինսկին իր «Մեծ Շախմատային տախտակ» գրքում. 2015 թ. աշխարհը կհանգի երեք հզոր ուժերի՝ Չինաստանի, ԱՄՆ-ի և Եվրոպայի հակամարտությանը[25]: Անկախ նման կանխատեսման իրատեսական լինելուց, խոշոր պետությունների հետ հարաբերություններն հանդիսանում են Չինաստանի արտաքին քաղաքականության կարևոր բաղադրիչը՝ նրա խաղաղ զարգացման ձգտումների համատեքստում:

ԱՄՆ, Ռուսաստան, Եվրամիություն, ահա ուժի երեք աղբյուր ժամանակակից աշխարհում: Ինչպես են դասավորվում նրանց հարաբերությունները Չինաստանի հետ:

Բազմաբևեռ աշխարհակարգի խնդիրներից են Միացյալ Նահանգներ-Չինաստան հարաբերությունները: Դրանց ուղղվածությունը և բովանդակությունն ակնհայտորեն և էապես ազդելու են գլոբալ քաղաքակրթական, ռազմաքաղաքական և տնտեսական զարգացումների վրա: Մինչդեռ այն հարցում, թե ինչպիսի բնույթ են կրելու այդ հարաբերությունները, փորձագիտական մոտեցումները երբեմն տրամագծորեն տարբերվում են միմիանցից:

Չին-Ամերիկյան հարաբերությունների հետ համեմատած՝ Ռուսաստանի հետ Չինաստանի հարաբերություններն ունեն առանձնահատկություն: 20-րդ դարի 40–50-ական թվականների սերնդի հիշողություններում հոկտեմբերյան հեղափոխությամբ ծնված Խորհրդային Միությունը հառնում է որպես գաղափարակից, իմպերիալիզմի դեմ պայքարող, երրորդ աշխարհի երկրներին օգնող պետություն:

---

[24] Дергачев В., Борьба за геополитическую архитектуру мира, Единое Отечество, N 3, 2010, стр. 5–6.

[25] Бжезинский З., Великая шахматная доска, стр. 21. http://lib.ru/politolog/America.bzhezinskiytxt.

Եթե խոսքը գնում է Չինաստանի և Եվրոպայի մասին, ապա Եվրոպացի մասնագետների կարծիքով Չինաստանի և Եվրոպայի փոխհարաբերությունների պատմությունը հաշվում է մի քանի հարյուրամյակ, և մինչ օրս եվրոպական և չինական արժեքային համակարգերը տարբերվում են: Չին-Եվրոպական հարցերով մասնագետ Չժաո Ժույանն ենթադրում է, որ «Չինաստանը դեռևս ունի անորոշության բավարար գործոններ եվրոպական երկրների հետ հարաբերություններում, որի արդյունքում հեշտությամբ թույլ են տրվում սխալներ»:

Պեկինի գլխավոր աշխարհաքաղաքական նպատակին են ծառայում հիմնականում մերձծովյան տարածաշրջաններում հատուկ տնտեսական գոտիների ստեղծումը, որոնք կոչված են ապահովելու տարբեր տնտեսությունների աստիճանական, փուլային փոխակերպումը: Չինաստանի իշխանությունը ձգտում է, որպեսզի կոմունիստական երկրի ժամանակակից դեմքը դառնա ոչ թե նախկին գաղութատիրական Հոնկոնգը, այլ Շանհայը, ուր դինամիկորեն զարգանում է Պուդունի տնտեսական և տեխնոլոգիական գոտին և ձևավորվում է նոր համաշխարհային (Ասիական) ֆինանսական և տնտեսական կենտրոնը:

Չինաստանն ունենալով երկարակյաց քաղաքակրթության պատմություն և մեծ փիլիսոփայական կարգի վրա հիմնված քաղաքական ավանդույթներ՝ իր ուրույն տեղն է զբաղեցնում նոր աշխարհակարգում: Նորովի ստեղծված աշխարհակարգում, որտեղ «ուժեղ» տերությունները մի քանիսն են, այլ ոչ թե մեկը, Չինաստանի դերը անփոխարինելի է: Չինաստանն ունի իր սեփական աշխարհաքաղաքական հայացքները և մոտեցումները: Այն համաշխարհային պատմության մեջ գրում է մի նոր էջ, որտեղ «միաբևեռ» աշխարհը փոխարինվում է «բազմաբևեռ» համակարգով:

Առաջին գլխի երկրորդ ենթավերնագիր: «Չինաստանի տարածաշրջանային քաղաքականության հիմնական ուղղությունները» - Վերլուծելով Չինաստանի արտաքին քաղաքականությունը, անհրաժեշտ է նշել նրա աշխարհաքաղաքական և տարածաշրջանային հետաքրքրությունների շարժունակությունը և տարածաշրջանային քաղաքականության անընդհատ ընդլայնման միտումները: Պահպանելով «հին» տարածաշրջանային ծրագիրը և աջակցելով նորին, Չինաստանն առավել մեծ հնարավորություն ստացավ մեծ ձևաչափով դիտարկելու գլոբալ այնպիսի պրոբլեմներ, ինչպիսիք են ֆինանսական համակարգի ձևավորումը, զարգացող երկրների շահերի համատեղ պաշտպանությունը, սննդի և էներգետիկ անվտանգությունը, կլիմայի փոփոխություններին համատեղ դիմակայումը և այլն:

Այսպես կոչված «սառը պատերազմի» ավարտից հետո Չինաստանն իր որդեգրած « ճկուն դիվանագիտության» շնորհիվ, բացի իր սահմանակից տարածաշրջանների, կարողացավ իր ներկայությունն հաստատել նաև Լատինական Ամերիկայում, Աֆրիկայում, Կենտրոնական Ասիայում, Կասպիան տարածաշրջանում ինչպես նաև Հարավային Կովկասում:

Գլուխ երկրորդ: «Չինաստանի քաղաքականությունը Հարավային Կովկասում (1991–2010 թթ.)»: Անդրադարձ է կատարվում Չինաստանի հարաբերություններին Հր. Կովկասի երկրների՝ Վրաստանի և Ադրբեջանի հետ: Ուսումնասիրվում է նաև Չինաստանի ունեցած երկկողմ հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ, որպես Հր. Կովկասյան պետություններին անմիջական հարևան, ինչպես նաև տարածաշրջանում ակտիվ դերակատարություն ունեցող պետություններ:

Չինաստանն իր «ճկուն» դիվանագիտության շնորհիվ բարիդրացիական հարաբերություններ է ստեղծել ոչ միայն հարևան պետությունների հետ, այլև հեռավոր տարածաշրջաններում: Չինաստանի տարածաշրջանային քաղաքականությունը և հետաքրքրությունների բազմազանությունը նրան բերել են Կենտրոնական Ասիա, Կասպիան տարածաշրջան և նույնիսկ Հարավային Կովկաս, որտեղ բոլոր պետությունների հետ հարաբերություններում Չինաստանն ունի յուրահատուկ մոտեցում և միմիանցից տարբերվող շահեր:

Հարավային Կովկասը համարվում է աշխարհի կարևորագույն տարածաշրջաններից մեկը, որտեղ բախվում են տարբեր գերտերությունների շահերը: Չինաստանը բացառություն չի կազմում և ակտիվ է թե՛ Հարավային Կովկասի երկրների, թե՛ նրան հարող երկրների հետ հարաբերություններում: Բացի Հարավ Կովկասյան երկրներից Չինաստանը տվյալ տարածաշրջանային քաղաքականության մեջ ներառում է Թուրքիան և Իրանը՝ այս կերպ ավելի հստակեցնելով տարածաշրջանի բնական հանածոներից օգտվելու և նոր միջանցքների ստեղծման հնարավորությունները: Նրա հավասարակշռված քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի, Հարավային Օսիայի և Աբխազիայի հարցերում ծառայում են մի նպատակի՝ տարածաշրջանի պետությունները պարտավորվում են աջակցել «Մեկ Չինաստանի» քաղաքականությանը և ամրապնդել չինական տնտեսական ներկայությունը տարածաշրջանում:

Երկրորդ գլխի առաջին ենթավերնագիր: «Չին-վրացական փոխհարաբերությունները» - Չինաստանի և Վրաստանի միջև ավանդական հարաբերությունները սկսվում են դեռ «Մետաքսե ճանապարհի» ժամանակներից: Հայտնաբերվել են շատ տարեգրություններ չին-վրացական հարաբերությունների վերաբերյալ[26]:

1991 թ. անմիջապես Վրաստանի անկախության ձեռքբերումից հետո, Չինաստանն առաջինների շարքում էր, որ ճանաչեց նորաստեղծ Հանրապետության անկախությունը: Երկու կառավարությունների ներկայացուցիչները 1992 թ. հունիսի 9-ին ստորագրեցին Դիվանագիտական հարաբերությունների հաստատման վերաբերյալ համատեղ արձանագրություն: Պաշտոնական դիվանագիտական հարաբերությունները սկզբնավորվեցին երկկողմ հարաբերությունների նոր

[26] Jiechi Y., The Evergreen China-Georgia Traditional Friendship-In Commemoration of 15th Anniversary Of Diplomatic Relations Between China and Georgia, 2007. http://ie.china-embassy.org/eng/.

շրջանի բացմամբ և դեսպանությունների մակարդակով: Չին-Վրացական հարաբերություններում շրջադարձային տարի հանդիսացավ 2008 թ.:

Երկրորդ գլխի երկրորդ ենթավերնագիր: «Չին-ադրբեջանական փոխհարաբերությունները» - 1994 թ-ին Հ. Ալիևի այցը բացեց մի նոր էջ չին-ադրբեջանական հարաբերություններում: Ալիևը մեկնել էր Չինաստան տեսնելու, թե ինչպես են համադրվում միակուսակցական կառավարությունը և տնտեսական արագ աճը: Երկու պետությունների միջև առևտուրը սկսեց ծաղկել, և չինական գործակալությունները սկսեցին հետաքրքրվել ադրբեջանական շուկայով: Ավելի կարևոր է այն, որ Չինաստանը լինելով ՄԱԿ-ի հինգ հիմնական անդամներից մեկը՝ ճանաչել է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը: Անջատողական, ահաբեկչական սպառնալիքները ավելի լայնացրեցին երկու երկրների միջև համագործակցության հորիզոնները: Չինաստանն առաջին Արևելա Ասիական երկիրն էր, որը ճանաչել է Ադրբեջանի անկախությունը և 1992 թ. դեսպանություն բացել Բաքվում: Ադրբեջանա-չինական պետական շփումների սկիզբը դրվել է 1991 թ. դեկտեմբերի 27-ին՝ ՉԺՀ-ի կողմից Ադրբեջանի Հանրապետության պաշտոնապես ճանաչումից հետո: 1992 թ. ապրիլի 2-ին Չինաստանի կառավարության ներկայացուցիչ Վան Չինքինը (ՌԴ-ում Չինաստանի արտակարգ և լիազոր դեսպան) Ադրբեջանի արտաքին գործերի նախարարի հետ Բաքվում ստորագրեցին «Չինաստանի և Ադրբեջանի միջև դիվանագիտական հարաբերությունների հաստատման մասին» արձանագրություն:

Երկրորդ գլխի երրորդ ենթավերնագիր - «Չինաստանի հարաբերությունները Թուրքիայի և Իրանի հետ» - Չինաստանի հարաբերությունները թյուրքական ցեղերի հետ ունեն պատմական արմատներ: Դիվանագիտական կապերը սկսել են ամրապնդվել Թուրքիայի կողմից Չինաստանի անկախության ճանաչումից ի վեր: Թուրքիան պաշտոնապես ճանաչել է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը 1971 թ. օգոստոսի 5-ին: Թուրքիան ընդունում է «Մեկ Չինաստանի» սկզբունքը և ճանաչում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը՝ որպես ամբողջ Չինաստանի իրավական ներկայացուցիչ[27]: Սկսած 1971 թ. երկու պետությունների միջև հարաբերությունները զարգանում են կայուն տեմպերով: Սակայն վերջին տարիներին լուրջ ճգնաժամ արձանագրվեց չին-թուրքական հարաբերություններում, որը պայմանավորված էր 2009 թ. ամռանը Չինաստանի Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջանում տեղի ունեցած դեպքերով:

Իսկ ահա տարածաշրջանի գերտերության մեկ այլ հավակնորդ՝ Իրանը փորձում է տարածաշրջանում ստեղծել նոր միավորումներ, որին կանդամակցեն Չինաստանը, Հնդկաստանը, Բրազիլիան: Չին-իրանական

[27] Daly J., Sino-Turkish Relations Beyond the Silk Road, The Jamestown Foundation, 04.05.2007. http://www.jamestown.org/articles-by-author/?no_cache=1&tx_cablanttnewsstaffrelation_pil%5Bauthor%D=147.

հարաբերությունները ևս ունեն խորը պատմական արմատներ: Չինաստանի և Իրանի միջև հարաբերությունները սկզբնավորվել են երկու հազար տարի առաջ: Երկու ազգերը մեծագույն քաղաքակրթությունների ժառանգորդներ են և կայսրական կենտրոններ: Նախաիսլամական ժամանակաշրջանում Հան դինաստիայի միջնորդները կապեր էին ստեղծել Պարթևների և Սասանյանների հետ՝ հիմքում դնելով շահութաբեր առևտրական կապերը Չինաստանի և Պարսկաստանի միջև: Իսլամական ժամանակներում չին-իրանական մշակութային և առևտրական հարաբերությունների միջոց հանդիսացավ Մետաքսե Մեծ ճանապարհը: Երկու պետությունները չեն ունեցել ընդհանուր սահմաններ, սակայն կապերը ամրապնդվել են առևտրի միջոցով: Պետք է նշել, որ արդի ժամանակաշրջանում չին-իրանական հարաբերությունները միշտ չէ որ եղել են ջերմ: Այդուհանդերձ 1950-ական և 60-ական թվականներին Սառը Պատերազմի ռազմավարությունը և քաղաքականությունը ավելացրեցին երրորդ աշխարհի կայունությունը: 1955 թ. Իրանը դարձավ Բաղդադյան պակտի մասնակից, և հաջորդ տարի ստեղծեց պաշտոնական հարաբերություններ Թայվանի հետ՝ ակտիվ մասնակից դառնալով Արևմտյան տարածաշրջանային անվտանգության ծրագրին:

Այսպիսով, Չինաստանի հարաբերությունները Իրանի և Թուրքիայի հետ ունեն ոչ միայն տարածաշրջանային քաղաքականության նշանակություն: Իրանը և Թուրքիան այսօր համարվում են մահմեդական աշխարհի գերտերություններ և ի դեմս արմատական իսլամական Իրանի և աշխարհիկ Թուրքիայի Չինաստանը ձեռք է բերում ազդեցիկ գործընկերներ՝ իր ներգրավածությունը մահմեդական աշխարհում մեծացնելու համար:

Գլուխ երրորդ: «Չին-հայկական փոխհարաբերությունները 1991–2010 թթ.» - Չինաստանը Հարավային Կովկասում կարևորում է Հայաստանի հետ հարաբերությունների սերտացումն ու ամրապնդումը:

Չինաստանը և չինացիները հայ պատմագրության մեջ հիշատակվում են 5-րդ դարից[28]: Համաձայն չինական պատմական աղբյուրների՝ հայերը Չինաստանում առաջին անգամ հիշատակվում են դեռ մ.թ. 2-րդ դարում: Նրանք եղել են մետաքս և այլ ապրանքներ արտահանող վաճառականներ: Հայ-չինական առևտրային կապերը պահպանվում են մինչ մեր օրերը և ընթանում են ժամանակին համընթաց: Հարաբերությունները զարգանում են տարբեր ոլորտներում, այդ թվում կրթական, մշակութային, ռազմական:

Երրորդ գլխի առաջին ենթավերնագիր: «Չին-հայկական դիվանագիտական կապերը ՀՀ անկախացումից մինչև 2010 թ.» - 1991 թ. սեպտեմբերի 21-ին Հայաստանը հռչակվեց անկախ պետություն: Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունն առաջիններից մեկը ճանաչեց Հայաստանի ինքնիշխանությունն ու անկախությունը և

[28] Սաֆարյան Մ., Չինաստան. Երկնատակի Կայսրություն, Կառավարում ,N 1, 2002, էջ 53:

դիվանագիտական հարաբերություններ հաստատեց նրա հետ: Նման քայլը խոսում է Չինաստանի հետաքրքրությունների մասին:

ՀՀ անկախացումից հետո ընկած ժամանակահատվածում իրենց զարգացման մեջ հայ-չինական հարաբերությունները բաժանվում են երեք փուլերի, որոնք պայմանականորեն կարելի է դասակարգել որպես նախնական, համակողմանի ծավալման և տարբերակված զարգացման: Ժամանակակից հարաբերությունները աչքի են ընկել տնտեսական, մշակութային կապերի զարգացմամբ՝ հաճախ տեղի ունեցող պաշտոնական և ոչ պաշտոնական այցերով:

1990 թ. Չինաստանն առաջիններից մեկը ճանաչեց ՀՀ անկախությունը և բացեց դեսպանատուն Երևանում: Հայաստանի անկախացումից ի վեր երկու երկրների հարաբերություններում նկատելի աճ է նկատվում, թե ռազմական, թե տնտեսական և թե քաղաքական և մշակութային ասպարեզներում:

Երրորդ գլխի երկրորդ ենթավերնագիր: «Հայ-չինական հարաբերությունների ռազմավարական տեսանկյունը» - Հայ-չինական հարաբերություններում բացի տնտեսական և մշակութային կապերի, կարևոր տեղ են զբաղեցնում ռազմավարական կարևորություն ունեցող հարցերը: Մտորելով Հարավային Կովկասի երկրների հանդեպ Չինաստանի հետաքրքրությունների մասին անհրաժեշտ է նշել, որ դրանք թեև չեն ստացել հստակ տարածաշրջանային բնույթ, այնուամենայնիվ աճի ակնհայտ միտում ունեն կապված վերջին տարիներին մեր տարածաշրջանում (Հարավային Կովկաս) Չինաստանի քաղաքական և տնտեսական դերակատարման շեշտակի ամրապնդման հետ: ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Չժու Չժաոշունի կարծիքով «Անդրկովկասը աշխարհաքաղաքականության մեջ ռազմավարական կարևոր շրջան է: Այստեղ խաչմերուկն է հարավ-հյուսիսի և արևելք-արևմուտքի: Այստեղ խաչվում են նաև տարբեր ռազմական և տնտեսական դաշինքների հետաքրքրությունները: Բնականաբար տարածաշրջանի յուրաքանչյուր երկիր, այդ թվում և Հայաստանն իր վրա է հրավիրում արտաքին աշխարհի ուշադրությունը: Չինաստանը Անդրկովկասում չի հետապնդում շահադիտական նպատակներ: Մենք ցանկանում ենք կայունություն և առաջընթաց ամբողջ տարածաշրջանում: Ես կարծում եմ, որ դա բխում է ինչպես Չինաստանի, այնպես էլ տարածաշրջանի երկրների հեռանկարային հետաքրքրություններից»:

Չին-հայկական քաղաքական հարաբերությունների հիմնական հետաքրքրությունները զարգանում են իրար նման և միաժամանակ սկզբունքորեն իրարից շատ տարբեր՝ Թայվանի և ԼՂ հիմնահարցերի շուրջ: Երկուսի համար էլ հիմնահարցի վերաբերյալ կարևոր է մյուսի դիրքորոշումը: ՀՀ և ՉԺՀ արտաքին գերատեսչությունների միջև երեք անգամ՝ 2002 թ. փետրվարին, 2003 թ. դեկտեմբերին և 2006 թ. նոյեմբերին, տեղի են ունեցել քաղաքական խորհրդակցություններ՝ փոխարտգործնախարարների և վարչության պետերի մակարդակով:

Հայաստանն աջակցում է ՉԺՀ-ին Թայվանի խնդրում: Հայաստանի Հանրապետության պաշտոնական դիրքորոշման համաձայն՝ Չինաստանը հավասարակշռված դիրքորոշում ունի ԼՂՀ հիմնախնդրի կապակցությամբ:

Խորհրդային Միության փլուզումից հետո Անդրկովկասում և Միջին Ասիայում գերտերությունների, տարածաշրջանային տերությունների ուժերի հարաբերակցության մեջ Պեկինը փորձում է զբաղեցնել այնպիսի տեղ, որը նրան հնարավորություն կընձեռի օգտվել տարածաշրջանի հսկայական բնական պաշարներից, միևնույն ժամանակ կչեզոքացնի տարածաշրջանը Չինաստանի թյուրքալեզու Սինձյան (պատմական Արևելյան Թուրքեստան) նահանգում առկա անջատողական շարժման համար հենակետ դարձնելու փորձերը: Բավականին երկար ժամանակ Մեծ Թուրանի ստեղծման գաղափարախոսությունը ակտիվորեն չէր օգտագործվում թուրքական աշխարհում՝ չնայած որ Թուրքիան կամաց-կամաց կարևոր տեղ էր զբաղեցնում մահմեդական աշխարհում և այս գաղափարախոսության հետևորդները սկսեցին գլուխ բարձրացնել մուսուլմանական մյուս երկրներում: Լ. Շիրինյանն իր աշխատություններից մեկում նշում է, որ Հարավային Կովկասը գտնվում է ռազմաքաղաքական, տնտեսական ու մշակութային երկշերտ ազդեցության գոտում, այն ընկած է Բալկաններից մինչև Չինական Մեծ պարիսպ ձգվող «թյուրքական աշխարհի» կենտրոնում:

Կարող ենք եզրակացնել, որ Հայաստանի հետ հարաբերություններում Չինաստանն ավելի հակված է ռազմավարական գործընկերության, քանզի պարզ է, որ «Մեծ Թուրանի» ստեղծման գաղափարի իրագործման ճանապարհին կանգնած խոչընդոտներից մեկը Հայաստանն է: Այս պարագայում չօգտագործել ընձեռնված իրական հնարավորությունը՝ պարզապես քաղաքական անհեռատեսություն ու միամտություն է: Հայ քաղաքական և գիտական շրջանակները, պետական կառույցներն առավել մեծ թափով պետք է սկսեն խոսել «Մեծ Թուրանի» (Մեծ Թուրքիա - Անդրատլանտիկից մինչև Չինական մեծ պարիսպ) վտանգի հրատապության մասին: Հայաստանում պետք է կազմակերպվեն մի շարք միջազգային գիտական ու ոչ գիտական միջոցառումներ ու կոնֆերանսներ, որտեղ հաշվի առնելով ույղուրների հետ կապված վերջին զարգացումները, առավել մեծ շեշտադրությամբ պետք է խոսել այս հարցում Հայաստանի ունեցած տեղի ու դերի մասին և փորձել հնարավորինս օգուտ քաղել ստեղծված աշխարհաքաղաքական բարդ իրավիճակից: ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռ. Սաֆրաստյանի ենթադրությամբ. «Չինաստանը Հայաստանը համարում է տարածաշրջանում առանցքային երկիր, քանի որ համեմատած Ադրբեջանի և Վրաստանի հետ, մեզ մոտ ավելի դինամիկ և կայուն քաղաքական համակարգ է ձևավորվում»:

Այսպիսով, հայ-չինական հարաբերություններն իրենց ուրույն տեղն են գտել համաշխարհային պատմության էջերում: Այդ հարաբերություններում առկա են հարցեր, որոնք պահանջում են ռազմավարական համագործակցություն և ռազմավարական լուծումներ: Մենք կարծում ենք, որ հարկավոր է ավելի հետևողական քաղաքականություն վարել հայ-չինական հարաբերություններում:

Եզրակացություն: Կատարվել է ատենախոսության հիմնական եզրակացությունների ամփոփում: Ուսումնասիրելով Չինաստանի դերակատարությունը միջազգային հարաբերություններում, նրա հետապնդած նպատակները, հիմնական ակնկալիքներն ու գերակայությունները, արտաքին քաղաքականության առանձնահատկությունները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության հետ հարաբերությունների ներկան և զարգացման միտումները,ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները, կարող ենք հանգել հետևյալ հիմնական եզրահանգումներին:

- Չինաստանի զարգացող դերը 21–րդ դարում հիմնականում արդյունք է գիտական մտածողության և բնության օրենքների խորը ընկալման: Հենց այդ հիմքերը կատարելագործեցին չինական փիլիսոփայության դերը արտաքին քաղաքականությունում: Խաղաղություն, զարգացում, ընկերական հարաբերություններ, ներդաշնակություն, համագործակցություն հասկացություններն ընկան Չինաստանի արտաքին քաղաքականության առանձնահատկությունների հիմքում:
- 1990-ականների սկզբին Չինաստանի զարգացող տնտեսությունը նրան հնարավորություն տվեց դառնալ համաշխարհային պատմություն կերտող լուրջ դերակատար միջազգային հարաբերությունների ասպարեզում՝ ավելի մեծ ուշադրություն դարձնելով ՉԺՀ արտաքին քաղաքականությանը: Արտաքին աշխարհի հետ կապերի սերտացումը նկատվեց Չինաստանի երրորդ սերնդի ղեկավարների իշխանության գալուց հետո: Այս սերնդի ղեկավարներն ավելի կրթված էին, նրանցից շատերը ուսանել էին արտերկրում: Երրորդ սերնդի ղեկավարները Հու Ցինտաոյի գլխավորությամբ շեշտը դրեցին բազմաբևեռ աշխարհի ստեղծման և միաբևեռ աշխարհի վերացման տեսության վրա: Այս նոր աշխարհաքաղաքականության մեջ կարևորվում է ԱՄՆ-ի և Ռուսաստանի դերը, որոնց հետ հարաբերություններում ՉԺՀ կառավարությունը ցուցաբերում է բարեկամական մոտեցում և միաժամանակ բազմաթիվ առիթներով արտահայտել է իր զգուշավորությունը՝ զարգացած պետությունների հետ հարաբերություններում:
- Չինաստանի արտաքին քաղաքականությունում կարևորվում է բազմաբևեռ աշխարհի կազմավորումը, որտեղ չկան «իշխող» պետություններ: Կարծես թե բազմաբևեռ աշխարհն արդեն կառուցվել է, որտեղ գլխավոր դերակատարը մեկը չէ, այլ մի քանիսն են՝ առաջին հերթին ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի հինգ մշտական անդամները: Նման աշխարհակարգն ավելի վստահելի է և կարող է ապահովել խաղաղությունն ու կայունությունն աշխարհում, կարող է ստեղծել համագործակցության համար ամուր հիմքեր և թույլ կտա զարգացող պետություններին վստահել գերտերություններին: Չին գիտնականների կողմից նման համոզմունքը հիմնավորվում է Չինաստանի խաղաղ գոյակցման սկզբունքով: Չնայած նրան, որ այս սկզբունքներն ունեն գրեթե քառասուն տարվա պատմություն, դրանք արդիական են և որոշիչ դեր են խաղում Չինաստանի արտաքին աշխարհի հետ հարաբերություններում նաև այսօր:

- 1990-ականներին ՉԺՀ կառավարությունը սկսեց ուշադրություն դարձնել տարածաշրջանային քաղաքականությանը: Տարածաշրջանային քաղաքականության ակտիվ զարգացման հետևանքով է, որ Չինաստանն իր հարուստ ներուժն է թելադրում Լատինական Ամերիկայում և Աֆրիկայում: Թե՛ Լատինական Ամերիկան և թե՛ Աֆրիկան աշխարհագրորեն շատ հեռու են չինական ազդեցության օղակից: Սակայն այսօր՝ նորովի ստեղծված աշխարհակարգում կարևորվում են Չինաստանի հարաբերությունները լատինամերիկյան և աֆրիկյան պետությունների հետ:
- 1990-ականներին Չինաստանն սկսեց իր ազդեցությունը տարածել Հարավ-Արևելյան, Հյուսիս-Արևելյան և Կենտրոնական Ասիայում: Ռուսաստանի ազդեցության թուլացումը Կենտրոնական Ասիայում մեծ հնարավորություններ ընձեռեց Չինաստանին իր դիրքերն ամրապնդելու համար: Կենտրոնական Ասիայի մի շարք պետությունների հետ Չինաստանն ունի փոխշահավետ առևտրատնտեսական շահեր: Կարելի է առանձնացնել Կենտրոնական Ասիայում Չինաստանի հետքրքրությունների երկու ոլորտ՝ անվտանգություն և տնտեսական շահեր: Անվտանգության ոլորտին են պատկանում ույղուրական անջատողականությունը, իսլամիստական ծայրահեղականությունը և ահաբեկչությունը: Այս ոլորտը վերահսկվում է ՇՀԿ շրջանակներում՝ համագործակցելով Կենտրոնասիական պետությունների և Ռուսաստանի հետ: Չինաստանն իր ներգրավվածությունն ապահովել է նաև Կասպիան տարածաշրջանում:
- Հարավային Կովկասում դիրքերն ամրապնդելու համար Չինաստանը կարևորում է Թուրքիայի և Իրանի հետ հարաբերությունները: Թուրքիայի և Իրանի հետ կապերը գործընկերային են: Թե՛ Թեհրանի և թե՛ Անկարայի հետ հարաբերություններում պաշտոնական Պեկինն ունի ռազմավարական նշանակության խնդիրներ: Իրանի դեպքում դա միջուկային էներգիայի շահագործման հետ կապված Պեկինի արձագանքներն են, որոնք միշտ եղել են ի օգուտ Թեհրանի պաշտոնական դիրքորոշման: Իսկ ահա Թուրքիայի դեպքում, երկար տարիների պատմություն ունեցող Սինձյան-Ույղուրական ինքնավար շրջանի հարցն է: Չինական կառավարության կողմից Սինձյան-Ույղուրական շրջանը դիտարկվում է որպես հարթակ՝ պանթյուրքական դարավոր ծրագրի իրագործման և Չինաստանից անկախանալու համար: Հակառակ չինական տեսանկյունի, թուրքական կողմը այն դիտարկում է որպես « բարեկամության կամուրջ» երկու երկրների միջև:
- 1990-ականների սկզբին, Խորհրդային Միության փլուզումից հետո, Չինաստանը շտապեց իր ներկայությունն հաստատել Հարավային Կովկասում, որտեղ իրենց անկախությունն էին հռչակել երեք նոր Հանրապետություններ: Չինաստանի հետ հարաբերություններն աշխուժացան 21-րդ դարի սկզբին: Վրաստանի և Ադրբեջանի հետ հարաբերություններում ՉԺՀ-ն արձանագրեց ձեռքբերումներ մշակույթի, կրթության, առևտրատնտեսական ոլորտներում: 1990-ականների երկրորդ կեսից շարունակեց զարգանալ առևտրատնտեսական համագործակցությունը հարավկովկասյան երկրների հետ: Չինաստանը կարողացավ ամրապնդել իր ներկայությունը Հր.Կովկասում:

• 1991 թ. Չինաստանն առաջիններից մեկը ճանաչեց նորաստեղծ Հայաստանի Հանրապետությունը: Հիմքում ունենալով սերտ պատմական կապեր՝ սկիզբ դրվեց չին-հայկական դիվանագիտական հարաբերություններին: Դիվանագիտական հարաբերությունների հաստատումից ի վեր պարբերաբար բարձր մակարդակի այցեր են կատարվում երկու երկրների կառավարությունների միջև: Բարձր մակարդակի այցերը նպաստավոր հող են նախապատրաստել հայ-չինական հետագա կապերի համար: Հայ-չինական հարաբերություններն ունեն զարգացման հեռանկարներ, կան բավականին մեծ ռեսուրսներ, որոնք պետք է օգտագործվեն թե տնտեսական և թե մշակութային ասպարեզներում:

• Չինաստանի հետաքրքրությունների բնույթը ՀՀ-ում նաև ռազմավարական են: Ռազմավարական հետաքրքրությունների ոլորտը ընդգրկում է երկու հիմնական ուղղություններ.

1. Լեռնային Ղարաբաղի և Թայվանի հիմնախնդիրներում երկու կողմերի արձանագրած հաջողությունները թույլ են տալիս երկու կառավարություններին ամրապնդել իրենց դրքորոշումները թե ԼՂ և թե Թայվանի հիմնահարցերում:

2. Չինաստանի տարածքային ամբողջականությանն ուղղակի սպառնալիք են հանդիսանում Հյուսիս-Արևմտյան Չինաստանում ույղուր-թյուրքալեզու բնակչության անջատողական և «Մեծ Թուրքիայի» անբաժան մասը կազմելու ձգտումները: Աշխարհագրորեն Հայաստանը կանգնած է թուրքերի կողմից դրդվող թյուրքալեզու ազգերին մեկ պետության մեջ համախմբելու պանթյուրքական ծրագրի ճանապարհին:

• Օգտվելով նման զարգացումներից՝ ՀՀ կառավարությունը պետք է փորձի Չինաստանին ավելի համոզիչ ներկայացնել Հայոց Մեծ Եղեռնի ողբերգական փաստը և հասնել չինական կառավարության կողմից ցեղասպանության դատապարտմանն ու ճանաչմանը; Նախ. այս փաստի ընդունումը Չինաստանի կողմից Թուրքիայի իշխանություններին կպահեն լարվածության մեջ և հետ կպահեն «Մեծ Թուրքիայի» կառուցման՝ պանթյուրքիզմի իրականացան գաղափարից: Հետևաբար չստանալով թուրքական կառավարության աջակցությունը՝ Սինձիանում կլռեն անջատողական ուժերը: Եվ, ի վերջո, Չինաստանի կողմից փաստի ճանաչումը կլինի ևս մեկ քայլ առաջ «Հայոց Ցեղասպանության» ճանաչման գործընթացում: Չինաստանի կողմից դատապարտումը կբերի այլ պետությունների կողմից ցեղասպանության շարունակական դատապարտմանը:

• Հարկավոր է ավելի մեծ աշխատանք կատարել Չինաստանի հետ ռազմավարական գործընկերությունն ամրապնդելու ուղղությամբ: Մեծ ծավալի աշխատանքներ է հարկավոր իրականացնել տեղեկատվության տրամադրման և հասարակական դիվանագիտության իրականացման ոլորտներում: Թերևս պետք է ավելացնել հայ-չինական թեմաներով սեմինարների, գիտաժողովների քանակը, հրավիրել չինացի մասնագետների և հասկանալ այս գերտերության արտաքին քաղաքականության իրական շարժառիթները:

Հետազոտության հիմնական արդյունքներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ գիտական աշխատություններում

1. **Սարգսյան Գոռ,** «Փափուկ ուժի» հայեցակարգը ՉԺՀ «խաղաղ հզորացման» քաղաքականությունում, Կանթեղ գիտական հոդվածների ժողովածու, 4(45), «Ասողիկ» հրատարակչություն, Երևան 2010, էջ 154–157:
2. **Սարգսյան Գոռ,** Չինական դասեր կամ «նրբանկատ» դիվանագիտություն, Լրաբեր հասարակական գիտությունների, 1-2(630), ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, Երևան, 2011, էջ 109–112:
3. **Սարգսյան. Գոռ.,**Հայ-չինական հարաբերությունների ռազմավարական տեսանկյունը, Բանբեր Երևանի Համալսարանի, 134.6, ԵՊՀ հրատարկչություն, Երևան 2011, էջ 41–49:

Sargsyan G. Gor

Peculiarities of China's foreign policy and china-armenian relations (1991-2010)

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of Philosophy in the Field of "World history" 07.00.02.

The Defense of the Dissertation will take place at 14.00, on May 31, 2012 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Address: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

SUMMARY

The main purpose of this research is to illustrate China's geopolitical specifications, its' role in current international relations and regional policy. The research attempts to identify CPR's interests and benefits in South Caucasus, particularly ties with the Republic of Armenia. The structure of the dissertation corresponds to the purpose and main objectives of the research and encompasses an introduction, three chapters, conclusion and a list of literature. Introduction provides the justification for the significance of research and describes the main purpose and objectives, elaborates upon the theoretical and practical value of the study and the methodology of the dissertation.

The first chapter of the dissertation - "The Specifications of China's Geopolicy" looks into the tendency of strengthening China's role in the modern world. With surprisingly fast growth China structures a new geopolitical system. This section also analyzes China's current relations with world powers such as Russia, EU, USA.

According to the theory of politician A. Hunter , China is one of the first actors to exploit "soft power". Sun Tzi in his "Art of War" named it "soft" way (Avoid the strong sides of enemy and use it's weakness). China has created "Great" civilization geopolicy based on great Chinese philosophy. Symbols for that geopolicy constitutes two main symbols the Silk Road and the Great Wall.(In general China considered as a civilization pretending state).

21st century is a concept of a specific time and China has a sober understanding and clear assessment of the international situation and China's domestic development in the coming hundred years. The foreign policy is based on the understanding of three points: world peace, multi-polarization and peaceful development.

China as a growing power gets extensively involved in different regions of the world. PRC widens its policy of "delicate diplomacy" in the every corner of the world. It faces developing process in Latin America, Africa, Central Asia, South East Asia. In these regions China's policy is different. It's relations with Third World countries based on economic cooperation. China made investments in Latin American and African states getting more and more effective. In Central Asia China follows both economic and strategic interests. Strategic cooperation with Central Asian states tends to fight East Turkestan separatist movement.

South East Asian region is of a particular interest and importance. China has a particular approach towards neighbor states. China has territorial disputes with range of South East Asian countries. PRC foreign policy directed to the peaceful resolution of this disputes via negotiations.

The second chapter of the dissertation - "China's Policy in South Caucasus (1991-2010)" consists of three sections and illustrates China's involvement in S. Caucasian region, relations with Georgia and Azerbaijan.

After the collapse of Soviet Union world main actors rushed to widen their influence in post-soviet countries including the S. Caucasian states. One of that actors, not surprisingly, was China. PRC has diplomatic ties with all three S. Caucasian states.

China - Georgian relations are growing fast and clear. These two countries have successful economic, cultural and educational collaboration. 2008 Georgia-Russia war made artificial concerns for China. PRC faced dilemma on choosing Russia or China to support. Later China provided with humanitarian aid both Georgia and South Ossetia. Another actor in South Caucasian region is Republic of Azerbaijan. Diplomatic relations between the two countries were set by the former president of Azerbaijan H. Aliev. China's relations with Azerbaijan are mainly built on economic benefits. This chapter also includes analysis of China's relations with Turkey and Iran which are considered to be powerful Islamic states and important actors in the new world structure.

The third chapter of the dissertation titled "China-Armenian relations 1991–2010" analyzes diplomatic relations between the two countries since independence of the RA to 2010. This section looks into important official and non-official visits and meetings between officials of two countries. Range of state visits provided new opportunities between two governments to improve and develop bilateral contacts in fields of economy, education, culture.

Besides the economic and cultural high profile ties, China has its' strategic interests in relations with Armenia. Cooperation in fields of strategic importance are available as well as beneficial for both sides. Dissertation's last section is dedicated to the strategic cooperation schemes between China and Armenia. First important strategic issue refers to Nagorno Karabagh and Taiwan straight conflicts.

Mutual support in this issue helps both sides to make progress at the conflicts resolution process.

Second important strategic cooperation is needed for the fight against Pan-Turkish ideology. This century-old ideology calls separatist movements in China (Xinjiang region).

We assume that more strategic approach in these two issues is important and inevitable.

Profound research of above mentioned spheres drives us to the conclusion that China has its' particular place at the world new geopolitical structure and Armenia has particular importance in PRC foreign affairs.

Саргсян Гор Гегамович

Особенности внешней политики Китая и китайско-армянские отношения (1991–2010 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02 – “Всемирная история”.

Защита состоится 31 мая 2012 г., в 14.00 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

РЕЗЮМЕ

Основной задачей диссерационного исследования, является выявление внешнеполитических особенностей Китая, а так же его роль в международных отношениях и в региональной политике. Исследования привели к идентификации выгодных интересов КНР на Южном Кавказе, в том числе и с Арменией. Структура работы соответсвует целям и основным задачам исследования, и состоит из введения, трех глав, выводов и списка использованной литературы. В введении обосновывается актуальность исследования, а так же методология диссертации.

Первая глава диссертации – “Особенности геополитики Китая”, где рассматривается роль Китая в современном мире и основы философских идей во внешней политике Китая.

Неожиданно резкое развитие Китая формирует новую геополитическую систему. Эта глава анализирует современные отношения Китая с такими мировыми игроками как Россия, ЕС, США. Политолог А. Хантер приводит такую теорию: “Китай был одним из первых, кто начал использовать мягкую силу”. Сун Цзы в своем трактате “Искусство войны”, назвал это “мягким способом”: “...пользуйся слабыми сторонами противника и избегай сильных сторон”. Китай создал “Великую цивилизационную геополитику”, на основе Великой Китайской философии. Символами этой геополитики являются два монумента: “Шелковый путь” и “Великая Китайская стена”. Китай принято считать “Цивилизацией выдающей себя за государство”.

Китай, как нарастающая сила, расширяет свои возможности в разных регионах и материках. КНР расширяет политику “Деликатной дипломатии” в каждом уголке мира. Китай так же начал внедрять эту политику в Латинской Америке, в Африке, в Центральной и Юго-Восточной Азии.

В 21-й век Китай вошел с трезвым пониманием, четкой оценкой международной обстановки и внутреннего развития Китая. Внешняя политика основывается на трех пунктах: мир во всем мире, многополярность и мирное развитие.

Китай, как нарастающая сила, расширяет свои возможности в разных регионах и материках. КНР расширяет политику, Деликатной дипломатии в каждом уголке мира. Китай так же начал внедрять эту политику в Латинской Америке, в Африке, в Центральной и Юго-Восточной Азии. Политика Китая в этих регионах разнообразно. Отношения со странами третьего мира основываются на экономическом сотрудничестве. Китайские инвестиции в странах Латинской Америки и Африки становятся все более эффективными. В Централной Азии придерживаются экономических и стратегических интересов. Стратегическое сотрудничество с государствами Централной Азии имеет тенденцию борьбы против сепаратистского движения.

Вторая глава диссертации – "Политика Китая на Южном Кавказе" 1991–2010 гг. Составлена из трех разделов и рассматривает роль Китая на Южно-Кавказском регионе в отношениях с Грузией и с Азербайджаном. После распада СССР, основные игроки мира поторопились расширить свое влияние в постсоветских странах, в том числе в странах Южного Кавказа. Одним из этих игроков, как не удивительно является КНР. У Китая есть дипломаические оношения со всеми тремя странами Южного Кавказа.

Китайско-Грузинские отношения развиваются быстро и стабильно. Между двумя странами существуют экономическое, культурное и научное сотрудничество. Грузинско-Российская пятидневная война 2008 г. создала искусственное беспокойство для Китая. Он был вынужден выбирать между Россией и США. Позже Китай стал осуществлять гуманитарную помощь и Грузии и Южной Осетии.

Другой страной Южного Кавказа является Республика Азербайджан. Дипломатические отношения между двумя странами были установлены при бывшем президенте Азербайджана Э. Алиеве. Отношения Китая с Азербайджаном в основном построены на экономических выгодах. Эта глава также анализирует отношения Китая с Турцией и с Ираном, которые являются исламскими странами и прямыми соседями Южно-Кавказского региона. И с Турцией и с Ираном у Китая нарастаюшие отношения.

Третья глава диссертации озаглавлена "Китайско-армянские отношения 1991-2010 гг.". Дипломатические отношения развиваются между двумя странами со дня независимости РА. Этот раздел освещает официальные и неофициальные визиты между должностными лицами двух государств. Многократные визиты создали новые шансы развития между двумя странами для совершенствования двухсторонних отношений в областях экономики, образования и культуры. Кроме экономических и культурных связей у Китая есть стратегические интересы по отношению с Арменией. Сотрудничество по стратегически вопросам важно и взаимовыгодно для двух сторон. Первый важный стратегический вопрос касается Нагорно-Карабахского и Тайваньского вопросов. Взаимная поддержка по этим вопросам помогает двум сторонам иметь прогресс в процессе разрешения этих конфликтов. Второе, это стартегическое сотрудничество необходимое для борьбы против идеологии пантюркизма. Это вековая идеология продвигает сепаратические движения на территории Китая (Синцзян). Армения стоит на пути пантюркизма. Мы считаем, что

стратегические подходы к этим вопросам очень важны и неизбежны. Но исследование вышеупомянутых сфер, приводит нас к выводу, что Китай имеет свое особенное место в новой мировой геополитике, в том числе и в Армении.